



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 147

**««ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՎ 2004
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ԹԻՎ ՀՕ-49-Ն ՕՐԵՆՔՈՎ
ՓՈՓՈԽՎԱԾ` ՆՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ 20-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի կողմից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի հիման վրա ներկայացված դիմումը, որով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը խնդրել է խորհրդատվական բնույթի պարզաբանում տրամադրել ««Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 3-ին ընդունված և 2004 թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-49-Ն օրենքով փոփոխված` «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. ««Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 3-ին ընդունված թիվ ՀՕ-49-Ն օրենքով (այսուհետ նաև` Օրենք) (ուժի մեջ է մտել 2004 թվականի ապրիլի 15-ին) «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«Փախստական երեխաները կորցնում են փախստականի կարգավիճակը, եթե օրենքով սահմանված կարգով նրանց ծնողները ձեռք են բերում Հայաստանի

Հանրապետության քաղաքացիություն, կամ նրանց որդեգրում են Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա քաղաքացիները, բացառությամբ այն դեպքերի, երբ որդեգրողները քաղաքացիություն չունեցող անձինք են կամ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիներ»:

2. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ դատարանների նախագահների խորհրդին հասցեագրված իր դիմումում վերլուծության ենթարկելով Օրենքով փոփոխված «Փախստականների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ նորմը, փաստարկել է, որ քննարկվող նորմով սահմանվել է պայման, համաձայն որի՝ փախստականի կարգավիճակ ունեցող ծնողների՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում փախստական երեխան կորցնում է փախստականի կարգավիճակը:

Վերոշարադրյալ փաստարկը համադրելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում ամրագրված նորմերի, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-649, ՍԳՈ-723, ՍԳՈ-758, ՍԳՈ-881, ՍԳՈ-1000 որոշումներում և Սանդի Թայման ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1979 թվականի ապրիլի 26-ի վճռում (զանգատ թիվ 6538/74) ձևավորված իրավական դիրքորոշումների հետ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է, որ Օրենքով փոփոխված «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը՝ որպես անձի իրավական վիճակը վատթարացնող նորմ, չի կարող տարածվել նախքան Օրենքի ընդունումը փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վրա:

3. ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ Օրենքով փոփոխված «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքով փախստական երեխայի՝ փախստականի կարգավիճակը կորցնելու հանգամանքը և սահմանում, որ փախստական երեխաներն օրենքի ուժով կորցնում են փախստականի կարգավիճակն այն դեպքում, երբ նրանց ծնողներն օրենքով սահմանված կարգով ձեռք են բերում ՀՀ քաղաքացիություն:

Միավորված Ազգերի Կազմակերպության 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սույն Կոնվենցիայի նպատակների համար երեխա է համարվում տասնութ տարին չլրացած յուրաքանչյուր անձ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ»:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Երեխա է համարվում 18 տարին չըրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ»:

4. 2009 թվականի հոկտեմբերի 20-ի ՍԳ-Ո-834 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «(...) փախստականի կարգավիճակ ունեցող անձանցից ծնված երեխաների կարգավիճակին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ միջազգային իրավունքը խրախուսում է այդ կատեգորիայի անձանց ընդունող պետության քաղաքացիություն տրամադրելու գործընթացը: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Փախստականների կողմից ընդունող պետության քաղաքացիության ձեռքբերման մասին անդամ պետություններին ուղղված R(84)21 հանձնարարականում Նախարարների կոմիտեն հանձնարարում է ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար ընդունող պետությունում կամ այլուր ծնված՝ փախստականների երեխաների՝ ընդունող պետության քաղաքացիության ձեռքբերումը»:

5. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին»:

Մեջբերված իրավակարգավորման իմաստով՝ անձի վիճակն այլ կերպ վատթարացնող է այն օրենքը, որում առկա կարգավորումը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածով չնախատեսված՝ այլ եղանակով անձի համար առաջացնում է անբարենպաստ (ծանր, բացասական և այլ) հետևանքներ:

6. Սույն որոշման 3-5-րդ կետերում շարադրված վերլուծության համադրման հիման վրա ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն արձանագրում է, որ Օրենքով փոփոխված «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանելով ծնողների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքով փախստական երեխայի՝ փախստականի կարգավիճակը կորցնելու հանգամանքը, ուղղված է փախստականների՝ Հայաստանի Հանրապետությունում կամ այլուր ծնված

երեխաների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերումն ապահովելուն: Արդյունքում փախստական երեխան իրական հնարավորություն է ստանում ձեռք բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և օգտվել ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով բացառապես ՀՀ քաղաքացիների համար երաշխավորված իրավունքներից ու ազատություններից: Այլ խոսքով՝ Օրենքով փոփոխված «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը անձի իրավական վիճակը բարելավող և ոչ թե «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի իմաստով՝ անձի իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ անձի իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմ է:

7. Սույն որոշման 6-րդ կետում շարադրված դիրքորոշումը բխում է ինչպես ՀՀ օրենսդրությունից, այնպես էլ դատական պրակտիկայից: Մասնավորապես, Օրենքով փոփոխված «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ ձևավորված կայուն դատական պրակտիկայի համաձայն՝ չի կարող անձի վիճակը վատթարացնող դիտվել այն դրույթը, որը «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի հիմքով անձի համար ստեղծում է հնարավորություն ստանալու այն երկրի քաղաքացիությունը, որի քաղաքացին հանդիսանում է նրա ծնողը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ Է

Ձևավորված իրավակիրառ պրակտիկայի համաձայն՝ ««Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 3-ին ընդունված թիվ ՀՕ-49-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2004 թվականի ապրիլի 15-ին) փոփոխված «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը չի հանդիսանում անձի իրավական վիճակը վատթարացնող նորմ:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2015թ. հուլիսի 16
ք.Երևան